

Կամո

Վարչական ղեկավար՝ Ռոբերտ Ղազարյան

Հեռ 093258693

Մակերես՝ 24.2կմ²

Բնակչություն՝ 1420

kamo.shirak@mta.gov.am

Համայնքի ներկայիս անվանումը – Կամո
Համայնքի պատմական անվանումները- Հաջինազար
Համայնքի հիմնադրման ժամանակաշրջանը – 1772
Որ համայնքներին է սահմանակից համայնքը – Ջաջուռ,Շիրակ,Կառնուտ,
Ախուրյան,Խնկոյան,և Հարթագյուղ
Համայնքի մակերեսը – 2418.6հա
Հեռավորությունը մայրաքաղաքից- 120կմ
Հեռավորությունը մարզկենտրոնից -12կմ
Բնակչության թիվը – 1510
Բնակչության կազմը –արական 761 իգական 749
Համայնքի նշանավոր մարդիկ -
Կրթական հաստատություններ – Կամո միջնակարգ դպրոց
Մշակութային հաստատություններ - գրադարան
Մարզական հաստատություններ -
Արտադրական ձեռնարկություններ - Ալրաղաց
Բնակչության հիմնական զբաղմունքը – գյուղատնտեսություն
Հոգևոր կառույցներ -
Համայնքի մասին գրքի առկայություն - 8408
ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱԸԿ

Կամո գյուղական համայնքը գտնվում է Շիրակի մարզի հյուսիս-արևելյան հատվածում, ծովի մակերևույթից 1700 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն է, լանդշաֆտը՝ լեռնատափաստանային, որը բարենպաստ է հողագործության ու անասնապահության համար:

Գյուղը նախկինում Հաջինազար հիմնադրվել է 1772թ և միայն 1935թ է վերանվանվել Կամո: Գյուղում բնակչության թիվը ավելացել է 1820թ. հետո Մշո դաշտից գախթված հայ ընտանիքներով: Ավելի ուշ 20-րդ դարի 20-ական թվականների վերջին, գյուղում հաստատվել են Արևմտյան Հայաստանի մի քանի գավառներից գաղթված հայ ընտանիքներ: Բնակչությունը հիմնականում հայեր են և խոսում են մշո բարբառով:

Համայնքի հեռավորությունը մարզկենտրոնից 12կմ է, հյուսիսից սահմանակից է Ջաջուռ գյուղական համայնքին,արևելքից Լոռու մարզի Խնկոյան գյուղական համայնքին, հյուսիս-արևելքից Լոռու մարզի Հարթագյուղ համայնքին, հարավից Կառնուտ և Ախուրյան գյուղական համայնքներին, արևմուտքից Շիրակի գյուղական համայնքին:

Համայնքը ունի 340 տնտեսություն, բնակչության թիվը կազմում է 1510 մարդ: 1990-1991թթ ընթացավ սեփականաշնորհման գործընթացը, որից օգտվեցին 390 ընտանիքներ: Այժմ բնակչությունը հիմնականում զբաղվում է երկրագործությամբ և անասնապահությամբ: Մշակում են հացահատիկային և բանջարաբոստանային կուլտուրաներ,կարտոֆիլ,զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնապահությամբ,մասամբ խոզաբուծությամբ:

Համայնքում կառուցվել են հուշարձաններ նվիրված Հայրենական Մեծ պատերազմի և 1988թ երկրաշարժի զոհերին, իսկ գյուղի անվան հետ կապված Սիմոն Արշակյանի Տեր-Պետրոսյանի (Կամո) կիսանդրին:

Գյուղի հարավային մասում 1.5կմ հեռավորության վրա է գտնվում Անտիկ բնակատեղի և դամբարանադաշտի տարածքը, որը թվագրում է մ.թ.ա. 2-1 հազարամյակը:

Այժմ համայնքում գործում է քարաշեն միջնակարգ դպրոցը, որտեղ հաճախում է 204 աշակերտ-ներ և փոստը, տնակային պայմաններում գործում են գրադարանը, բուժ կետը և գյուղապետարանը:

Համայնքը գազաֆիկացված է, որից օգտվում են 236 ընտանիքներ:

Համայնքից Արցախյան պատերազմի մասնակցեցին 11 ազատամարտիկներ, հանուն Արցախի ազատագրման զոհվեցին ազատամարտիկներ Մ.Գրիորյանը և Մ.Հակոբյանը:

ՀՀ Շիրակի մարզ, գ. Կամո

Ինդեքս՝ 2611